

Թ Ղ Թ Ա Կ Յ Ո Ւ Թ Ի Ի Ն

ԵԳՐՈՒԹԻ ՊԵՏԱՊՈԼԻՏԵՆ ՔՆՆԱԳԱՐԱՆԻ ԵՄԵՐՈՒԹԻ

Պատասխան «Հանդիսի» մէջ Հիւրերկալուած մեր յօդուածները Եղիշէի պատմութեան մասին առիթ են տուել «Հայունի» ամս բանասիրի «Բազմավեպի» մէջ երկու խորհրդածութիւններ անելու ընդգծել մեր կարծեալ»:

Թ. Բօզուածագրի, ինչպէս անձնական եւ ոչ մի բամբասանքի, նշոյնէս եւ գրական առարկութիւններին ներկայ գրութեամբ մի ուս մի պատասխանելու մտաբերութիւնը չունինք. բոտ որում պէտք է շանտը մօտիկ ապագայում մասնանշանէ մի գիտաւոր սղելիւր — ոչ շատ սնայտ եւ ոչ շատ յայտնի — որից օգտուել է Եղիշէի պատմութեան խմբագիրը այն բազմութիւն տարբեր եւ իրենատուկ տեղեկութիւններին համար, որոնք Ղազար ամենեւին չունի, եւ որոնք ցայտ՝ համարում էին իրեն առաւելութիւնները Եղիշէի իր բաժանակից մի յիշատակագրի պատմութեան: Այդ եղանակաւ կարծում ենք տակելի պարզուի, թէ Եղիշէի պատմութեան աւթանշանատութիւնը որ տօտեմանի կապակցել է: Իսկ այժմ նպատակ ունինք Հայունի քննական խորհրդածութիւններին հիման եւ ուղղութիւնը ցոյց տալ՝ ի գտնութիւն մի այլ գիտաւոր:

Իւր խորհրդածութիւնների ծանուցման մէջ Հայունի յայտնում է ընդհանրապէս իւր աւանդակաւ ուղղութիւնը, եւ մասնաւորապէս կանխակալ կարծիքը Եղիշէի պատմութեան հեղինակի եւ ժամանակի մասին: Նա գրում է՝ «Եղիշէն «մերձաւոր է հայ սրտի», թէ «մեր հայրը գործերը նուիրական են», եւ սակայն «գերմանական քննադատութեամբ ոչնչացնում ենք մեր հայրը անձնները եւ գործերը»: Այդ բողոքը յայտնելուց յետոյ, Հայունին՝ էլ ուրիշ մի լուրջ նպատակ եւ շարժառիթ չի տեսնում խորենացու, Ագաթանգեղոսի, Չնեմուրի, Եղիշի տաղանդաւոր, բայց ոչ-թիւ աղգատեր քննիչների մօտ, քան թէ — «Ինչ եւ է նոր բան մի ըսել»՝ փափաքանք գիտնական եւ քննադատական կոչուելու աղէկէ կամ չէ եւս անաշուա. քննադատ երեւելու՝ ինքու զատափտութեամբ» (451 էջ): Ուրիշ խօսքով — մեր յայտնի քննադատները փառք է ծարավ կարացած՝ ոտքի տակ են տալիս մեր նախնայաց հեղինակութիւնը եւ ջնջում են նրանց անձնները ու գործերը: — Քննադատութեան միջնադարեան հակապարզութիւն:

Այդ ողորմ «Բազմավեպի», քննադատը ուղղում է անշուշտ ներշնչել ընթերցողին — ագիտ. բոբոր նայլը նախնայաց գործերի այլակերպաւ մնացորդներին եւ չմերկացնել նրանց կեղծիքները: Ահա այս է եղել Հայունուն առաջնորդող միտքը իւր խորհրդածութիւնների մէջ. բայց կարող ենք հաւատալիք, որ իսկ չՀայունի եւ ընկ, ոչ զայլ եւս իմաստութիւն չի համարում՝ «գարշնչուն

ծածկել», եւ չի հայտնաւոր Հայունուն հետ խօսելու լինինք իմաստունի խօսքերով:

Բազմավեպի, այդ ողորմ շարժառիթը եղել են մեր յօդուածները, որոնք գրուած են Հայունուն բողոքովն օտար քննական ուղղութեամբ. եւ արդարեւ, ոչ թէ Հայունին նախնայաց հեղինակութիւնն ու ներկայակց գործերը մի մի շնորհակալ պարտու է ներկայացնում, որից միւս կողմ անշուշտ աղգելում է իրենից զուտ քննադատներին, մեր կարիք չենք գգացել այդպէս վարանելու: Քննադատը, մեր կարծիքով, անկեղծ պէտք է լինի. չպէտք է տատանուի մերկացնելու կեղծիքը, թէպէտ վերջին արդարեւ պատկանելիս լինի իրան մերձաւոր մի՝ նոյն իսկ շատ հեղինակաւոր անձի. անաշուշտութիւնը հետանում է քննադատութիւնից հենց այն վայրկեանից, երբ քննադատը իւր զգալունով առաջնորդուելով, կամ ճշնակելով անհատի վայելչութիւնը հեղինակութեան առաջ, չի մերկացնում նրա իսկական պատկառութիւնը, կամ կուրացած արեւակտուղ կարծիքով՝ չի կարողանում տեսնել այն. այդպէս առաջնորդուող քննադատը միայն լաւ, գեղեցիկը, գովելին է արձանագրում. եւ այդ պատճառով նրա գրութիւնը համարուում է միակողմանի եւ ոչ-անաշու: Մի խօսքով՝ քննադատը պարտաւոր է լինել ինքնուրոյն եւ ազատ ամեն տեսակ կանխակալ կարծիքից: Այսպէս ենք հասկանում մեր քննադատի պարտիքը կանխակալ կարծիքի նկատմամբ, եւ համաձայն այդ հասկացողութեան կարծեալները պարզել Հայունուն խորհրդածութիւնների եւ նրա կանխակալ կարծիքի տարեւելութիւնը:

Միւսեք հենց նրա յօդուածի սկզբից: — «Ենք ոչ Եղիշէի հայեացքը կը գտնենք զուտ կրօնական եւ ոչ Ղազարեան զուտ քաղաքական. այլ երկուքն այլ ունին թէ կրօնական եւ թէ քաղաքականը, ուրեմն ֆեւալոն հայեացք» (Եր. 453, մեր ատարագծում ենք): Այս տողերում Եղիշէն, որ մեր յօդուածում յետ էր գաւտան, ինչպէս եւ է իսկապէս, հաստատուում է Ղազարին, բայց յօդուածագրի կանխակալ կարծիքը թելադրում է նրան Ղազարից վաղ եւ առաւել ներկայացնել Եղիշէին. ուստի նոյն առթիւ, եւ էլ յետոյ (454) կարգում ենք. — «Գաղով Եղիշէն, իւր պատմածուց ականաւոր» (9) եւ ոչ «ի լուր գարշնչեալ»՝ Վկայի՝ ինչպէս Ղազարն էր, յայտնի է, թէ նա առիկ լալ ճեւեղէր (ատարագծում ենք) պարտիք ձգտումները, մօտեւ շուրջակալ նոյն երակը (??) եւ տարիներով շփուելով նոյն հետ եւսայլ»): Այսպէս Հայունին իւր կանխակալ կարծիքի շնորհիւ մոռանում է այնքան պարզ ծանախութիւնը՝ թէ ուր կայ նշանակել, այնպէս չկայ Բազմավեպին. իսկ ուր չկայ Բազմավեպին, այնպէս չի կարող լինել Բազմավեպին:

Ուրիշ օրինակ, Մեր յօդուածի մէջ Ղազարի ձերբակալութիւնը, որ Եղիշէն է միայն յիշում, յօդուած է ինքը ընդունել, Հայունուն այդ գուր չի եկել. որպէս զի ձերբակալութեան մասին Ղազարի պահած լուսութիւնը եւ Եղիշէի այդ մասին հակասութիւնը մեր աւսածին հիմք ծառայելու քօրութիւնից ընկնին, Հայունին աշխատել է մի պատմ

¹ «Բազմավեպի 1896 — Թ. 10, 11, 12, 1897 — Թ. 1, 2:

մութիւն հիւսել երկու պատմիչներից եւ այնտեղ յարմարեցնել Նիդէրլէն համարվի տուած տեղեկութիւնը: “Կախարդաց սիւնիցիէն տարկամամ ստորագործութիւն առնուը գէպըը շունի Նիդէն եւ ուր Վասակի ձերբակալութիւնը Ղազար:” որը բառով կարելի է այդ երկու գիպուածների այնպէս տեղեր գետեղել, որ աւելորդ կամ անտեղի չի լինի (483):” Եւ Վասակ, ըստ Հաջունու գիւտի, նախ դաւար համաձայնութիւն է առել ապստամբելու, որով միգրերի պայման մասնակից է համարուել, եւ ապա ապստամբութեան միջոցին միգրերի կողմն է անցել եւ ձերբակալուել: — Ընդունից մի ըսպէ որ Վասակ այդքան փոփոխամիտ էր, իսկ Ղազար՝ անդդոյլ պատմով Վարդանի յաղթութեան նկատմամբ Վասակի դէմ: Ընդունից նաեւ, որ Հաջունի մի այնպէս, բայց վաւերական աղբիւր ունի այդ բոլորի համար, եւ լսե՛նք նրան: “Զանգազուրի մահաւանդարագիրը, սուսմ է նա, ականջալուր եւ անտառից տեղեկութիւնք են ի կողմանէ Ղազարայ:” իսկ միգրերի կոտորածից յետոյ Հայոց բանակի հանգումանայը ըստ Ղազարի՝ նոյնպէս անտառից է եւ այդ երկու կէտում Նիդէրլէն տարբեր տեղեկութիւններն են ծիղ: Ուրիշ խօսքով՝ ապստամբութիւնը, որի միջոցին Վասակ իբր ձերբակալուել է, իւր սկուտածքի եւ վախճանի մասին տարբեր նկարագրութիւն ունի երկու պատմիչների մէջ. եւ ուրեմն Վասակի ձերբակալութեան մասին պատմիչների տարբեր տեղեկութիւնները պարզապէս ունեն երկու անհաստատ ծայրերի մէջ եւ համարաշուտութիւն չկայ գէթ այդ կէտում: Այս բոլորը համաձայն Հաջունու է. սակայն մարդ զարմանում է թէ ինչպէս նրա փոփոխական գրիչը մի քանի անգ միայն յետոյ գրում է բոլորովին հակասալի: — “Մենք պատմաբանաց երկու հաւատարմ ծայրից մէջ (Զանգազուրի մահը եւ ապստամբութեան վախճանը այստեղ արդէն հաւատարմում են) գրում են անհատարմ տեղեկութիւնք (Վասակի ձերբակալութիւնը)՝ իբրեւ մին միտին լրացուցիչ կը շարենք այս կարգաւ, եւ այլն: Այսպէս անհաստատ հաւատարմ է հուշակուում Հաջունու գրքով եւ ինչոյն իրար լրացնում են այն՝ ինչ որ ինչ առաջ հաղատում եւ ժրխտում են իրար: Այսպիսի պէտք է տեսնել, որ մասնիչներին եւ գաւառաններին տակ եւ հաշածել անիւ դարձ է, աղգաւորութիւն է. բայց երբ մի գրիչ անհաստատ հաւատարմ է փոխում, մասնիչ ներկայացնելու համար մեկին, այդտեղ տեղի է առնելու միայն թիւս եւ կեցած աղգաւորական եւ անիւս մի ցոյց, որ որեւէ մի քննական հարցի մէջ տեղ առնու սովորութիւնը անտար պէտք է լինի լուրջ գրիչ համար: ”

Հաջունի հենց այդ տաղում՝ ի հարկէ անգիտութիւն լստ ծիղը բնորոշ է երկու պատմիչների վերաբերմանը գէպ ի Վասակ. Ղազար Վասակին կոտորածի ոգուց ազատ ներկայացնելով հանգեր, նրան իբր պարտ կամով եւ միգրերի պաշտպանի գրեթ չի տալիս: Իսկ Նիդէն Վասակին պարկաւոր է ներկայացնում, նրա ձերբակալութեւն մասին տեղեկութիւնք իրենից անտեղեկով: — Ահա թէ որտեղ տարբերութիւնը հասանձն է ուզում հաշտեցնել “Բաղմակիւն” Հաջունին:

Ուրիշ օրինակ, Հաջունուն գուր չէ եկել մեր գրածը՝ թէ Նիդէրլէն Ը. յեղանակի բովանդակութիւնը կասկածելի է. (“Բաղմ.” 1897, էջ 86.) սակայն ինքը եւս Հաջունին նոյնն է սուսմ, առանց ի հարկէ իւր գրիչը արտոնչու: — “Նիդէն ինչ անգամ ունի (sic) պատմական իրողութիւնէ դուրս աղբիւր, բայց յալթերորդ յեղանակին, յորում՝ կը խօսի քահանայից վերայ:” (551.) Արդ՝ մեր գաւառագրութիւն կողմի, ըստ հայրենասէր Հաջունու, է այն, որ իբր թէ առաջնորդուել ենք թիւս հակակրթութեամբ կղերի եւ կղերափառաց դէմ. տեսնը մի ըսպէ թէ այդ այդպէս է. հապա ինքը Հաջունին ինչ հաշիւ ունի “մեր հինգերորդ զարու շորհայի հարց հետ, առաջնորդուելով համարութեամբ: ”

Ուրիշ օրինակ: 1897 թ. “Բաղմ.” էջ 15 — 16 գրում է — “Փարպեցոյն երկրորդ սեպհականին մէջ (Թ. 6), յորում կը նշանակուին նիդակակիցը Վարդանայ եւ նորա հետ Աղուանս կ'երթան, կը անանենք նաեւ զՎահեանուի գիւտ, որ թէ ըստ Նիդէրլէն (121, 160) եւ թէ ըստ նոյն ինչը Ղազարայ (195) կուտակից եւ դաւալից եր Վասակայ եւ մնացի Հայտասան: Եզար յայտնի է, թէ այդ հակասութիւնը պատուց է գրչադրաց աղաւաղման, զի գուր է թէ Ղազար ինքին գործած լինի զայդ: Չայտ կ'ընդունի եւ Տերգոսթանս:” Բայց ուրիշ տեղ, ուր պահանջ ունի Հաջունին Ղազարի մի տարեղջ ցոյցացը անտառից համարել՝ հետեւիցի նրան զրկելու միտումով յաղուտ Նիդէն: “Բաղմակիւն, քննադատը այդ անտառից տեղեկութիւնը, Վահեանուն. Թ. 6 ցոյցակում յիշուել, մասի փաթաթման է չինում, զրկելով (էջ 11.) — “Երկրորդ սեպհական (Թ. 6) կը զարտուից երկրորդ հանրականէն՝ նախապատմութեամբ Պալուսայ քան զՎահեանսի (ստորագրում ենք): — Այստեղ պէտք է յիշնը, որ մեր սերնդութեան անհման չկայ տեսնելով թէ Հաջունին զինաւորակ եղած, որպիսի միջոցներ է գիտում ճամբարը ծածկելու համար. բայց պէտք է խոստովանուի նաեւ, որ այդպիսի միջոցներ մի որեւէ օրգանում արեւմտագրութեւն մեզ առնուածն ցաւ է պատճառում: ”

Ուրիշ օրինակ: “Բաղմ.” 1896 էջ 486 գրում է Հաջունին. — “...Կա (Նիդէն) կը յիշն զՎասակ իբրեւ “զմ ոմն ի մեծ նախարարացն (121) եւ Բիւսարը գետպան. (հետաքրքիր է իմանալ՝ ո՞րն

Հաջունի 1897, էջ 11 գրում է — “Երկրորդէն (Թ. 6) էջ Բիւս (Տեր-Պաղանս) եւ զՎահեանուին իբրեւ սթալմար յիշում հոգ (ստորագրում ենք). բայց մեք այս պարզ տեղամահաւորութեամբ գահ չենք լինիր. այս մասին պիտի խօսինք յէջ 15-16, Բայց Հաջունին այդ էջերում տեղի չի տուած քան մերտաճը “Հանգելու 1895 էջ 23: Եւս մեր աղբիւր — Վարդան է ենք, որ գիւտ Վահեանուն յիշուել տալ է, որովհետեւ նոյն իսկ Ղազարի մէջ (217, Թ. 2) նա Վասակին կուտակից է յիշում եւ Վասակին հետ Հայտասանում մնաց 250 (ապ. սթալմ. 450) իսկ անհման. նոյն յիշում է եւ Նիդէն (57, Թ. 2) և — Ընթերցողը տեսնում է, որ Հաջունին միայն մեր տասնն է կրկնել, եւ դեռ գահ չէ նա մեր բացաւորութեամբ: ”

է այդ կէտի մասին Հայունու աղբիւրը) եւ այդու չէ որ ժողովրդ թէ շորտ հետ չընթերին ուրիշ հետեւ որոշոր այլ, զորո հարկ չէ համարած յիշել մի առ մի: — Այս սողերի մէջ նրանց հեղինակը, ինչպէս նրանից առաջ եւս մի բանատեր (Վ. Կոստանեան, Էդուարդ Գ. 108) եղիշէ ինչն իւր դէմ հակառակութիւնը խոստովանելուց խաւափելով, փորձում է հայտնեցնել երկու պատմութիւնքին, եւ ուրեմն նրանց մէջ տեսնում է ոչ թէ հակառակութիւն այլ բնորոշութիւն պատմական իրողութեան այս կամ այն մասերի մէջ: Բայց Հայունին այդու տեղ միայն հաստատեցրել է եղիշէին Ղազարի հետ, իսկ կանխակալ կարծիքով առաջինին բարձր պէտք է դնել երկրորդից. եւ ուս (1897, էջ 55) գրում է հակառակ. — "...ընդհակառակն մեծապէս խօշորէին էին Ղազարայ յիշած աշխարհը (շուրջեցէ) եւ այս կէտի — սեփ շէնքին իւշտութեամբ ... յայտնի խօշոր (տար) եւ փակագծի մեր): — Ինչպէս այստեղ մեջ թող մտնի մի պարզ եզրակացութիւն հանել Հայունու ասաններէից. նախ եղիշէն եւ Ղազար հաստատում են (համարաշին) (էջ 486, 1896), ապա Ղազար կատարմանի եւ դառնում են խանգարումն նոյն կէտում (էջ 55, 1897), ուրեմն... եզրակացնում են եւ եղիշէ իբր Ղազարին երբեմն հաւատար, կատարմանի եւ խանգարումն մեծանոյն կէտում: Ուրիշ բաներով. Հայունու աշխատութիւնը կոչացել է ոչինչների խոս խաղաղով. այսպէս մերթ ոչինչից հանել է ոչինչ, մերթ ոչինչից գումարել է ոչինչ, մերթ ոչինչով բարձրագոյնակել է ոչինչ եւ մերթ ոչինչ անգամ փոքրացրել է ոչինչը եւ ... միշտ եզրակացութեան մէջ սասցուել է ոչինչ, եւ միայն ոչինչ:

Բայց բաւական է. այսպէսով էլ կարծում ենք հակականալի է այն ժառայութիւնը, որ Հայունին մտածեցէլ է իւր աստուկ ընթերցողներին: Հետեւ ետևում մենք կը տեսնենք՝ թէ Հայունու գրիչը բառապաշարի գործածութեան եւ խեղաթիւրելու մէջ որքան վարժ է, եւ հմուտ անծանօթ նիւթի մասին գառնելու եւ վճիռներ տալու:

Բ.

Մինչեւ այժմ մենք տեսնում, թէ տեղեկեցիան յօգուածագրին որպիսի փախելու է թելադրել. Բայց Հայունու գրիչը այն գրիչներից միւրն է, որոնք իրենց կարողութեան չափը չեն ծանաչում եւ գիտեն պոռտապոռտութիւնով եւ զբաղվեցնել ընթերցողին. օրինակ՝ Հայունու գրիչը դեռ դիւտ բարձրից խօսել, մեծամեծ պահանջներ դնել քննադատների առաջ եւ կատարումն աշխատութիւնները համարել անհիմն, անարժէք: — Այսպէս նա փափաղ է յայտնում՝ օրինակ՝ խորհուրդ մտնի տեսնելու «միմայն քննադատութիւն, որոյ անտախտութիւնը հաստատուած լինէին» ոչ թէ սակ գրելու համար մտածուած բռնադատ փաստից (ինչպէս նա կարծում է ցարդ հրատարակածներն մասին), այլ շօշմարէի՝ լուրջ եւ անվիճելի հիմնուց վրայ. (որպիսի քննադատութեան մի օրինակ, հասկացումն է, պէտք է հանադիսանայ իւր խորհրդածութիւնը):

Այժմ հետաքրքիր է տեսնել՝ թէ այդ պիմպիական բարձրութիւնից խօսող լեզուն որպիսի մեղեք է դիմում, երբ ձեռքը անկումն է գեղ իրականութիւն. դառնք են նրա բառապաշարը եւ խեղաթիւրելու շնորհք: Խօսեցէ օրինակներով: Ղազարանի ապատմութիւնը գրեթէ 800 ժողովրդական գանգաղապարութիւնը եւ եպիփոպոսների պահանջով ապատմութեան մեծամարկելը Հայունին փորձում է հերքել, որպէս զի Ղազարանի կարողանայ վերադրել չունեցած ինքնուրոյնութիւն՝ ապատմութեան նշանաւոր գործում: «Դասիր հարկն, գրում է Հայունին, կը բռնադատեիր զՂազարան համբերելու իրայն եւ նոյն հարկն ստիպեց ապատմութիւնը. ուրեմն փայլ է կարծեմ, թէ պարզագոյն» բոստիլիշէի եպիփոպոսայ հպատակելու համար շարժեցաւ ի նոյն, (1896 — էջ 554 — 555): Այդ Հայունին այստեղ մի միայն բառեր է փոփոխել, որովհետեւ — «հարկն ստիպեց ապատմութիւնը» — խօսեցրը միայն տարբեր բառեր են նոյն իմաստով, որ ունին մեր տղերքի՝ թէ Ղազարան եպիփոպոսների կողմից ստիպեց ապատմութիւնը: Բայց ի այդ — «ձանք հարկը կը բռնադատեիր զՂազարան համբերելու իրայն» — նորից միայն տարբեր բառեր են նոյն իմաստով որ ունին մեր տղերքի՝ թէ Ղազարանի որդոյ պատմութիւնը եւ Ղազարան թշնամի նախարարների վատ հակամեքեր ի նկատ ունենալով, Ղազարան հակուած էր Ղազարի կողմից. ապատմութիւնը ու խոսեցելու եւ անտախտի գործերին համբերելու ինքնորոշում: — Այս բառապաշար ինչն է, յօրինում. կարծում ենք, որպէս զի մեր երկու նախադատութիւնների իմաստը — Ղազարան, Ղազարանի հակուած, ապատմութիւնը շէր քաշալերում, եւ — Ղազարան ապատմութիւնը իմաստաւորակց, երբ կըրը նրան ստիպեց այդ անել:

Ուրիշ օրինակ: Հայունին փորձում է հաւատացնել թէ ապատմութեան խորհրդաբանութեան հին չէ, որքան Հայերի Ապար աշխարհ դիւտը, կամ Հայոց պատմախանք. եւ սակայն տարբեր բառերով կրկնում է մեր գրա հակապիստածը. նա գրում է — «հաւատող վերայ վերջին մեծնելու ունեն ի՞նչ կապ ունի ապատմութեան հետ», եւ նա «վերջին», ստորագրում է շեշտելու համար թէ Հայերը ոչ թէ ապատմութիւն, այլ նա հատակուել էին ազգում: Որքան միամտութիւն եւ պարզութիւն Հայունու կարծիքն էր մտածումն է որ Հայերը ապատմութիւն էին կամ ուղղում էին ապատմութիւն ոչ միայն կրակապաշտ Պարսիկների դէմ, այլ եւ քրիստոնէի նախարարների դէմ դիւտում էին, երբեմն երբորը գէմ եղալայր, ծնողի դէմ որդին եւ միշտ հարազատոր հարազատի դէմ, նա մտածում է, որ նահապետների գէղքով չեն դիմաւորել թշնամուն թէ հին եւ թէ յաւորդարներում եւ թշնամիներից հարազատի կոտորելուց յետոյ չէ, որ պատմուել եւ նահապետուել են. նա դիւտ այդ բոլորը, կարծում ենք, բայց եւ այնպէս Հայերի ազգային միահամուռ ընդդիմահարութիւնը մի բառապաշարով փորձում է կամաւոր նահապետուել:

թեան վերածել, երեւի ի փառս քաջամարտիկ զինուորների. մի ընդհիմադրութիւն, որ Ապար աշխարհ գնալու ժամանակ մոռադուած էր, իսկ վերջում արդէն իրականօրէն երկու անգամ տեղի ունեցաւ Հայաստանում:

Թող ենք տալիս այստեղ յիշելու, որ այդպիսի բառախաղերը, ճիշդ է, յաճախ գործադրում են երբ հարկ է լինում բնազանցական խնդիրներում: «տառնի ալ ապացուցանել» անունի ալ, գալով մասնաւորական եւ գիտական հարցերին, առ նուազն աղնուութիւն չէ նրանցով օգտուելը:

Բայց Հայունին զէթ բառախաղով շատանար. նոր գրիչը մեր յօդուածի մտքերը փոփոխում է, խեղաթիւրում է, նրանցից նոր յօդուածներ է ստեղծում, որոնց դէմ ինքը հնչեալ զանազան զինուած է: Այս օրինակներ. — Եր. 458 — 1896 թ. կարգում ենք. «Հայոց Թիֆլիսի պատասխանատու Ժոյն Եփեմի (ստորագրում ենք) չէր կարող լինել կամ կարծուիլ Յազկերտէ,» — Մեր այդ մասին գրածը Հայունին ինքը ունի ընդդիմական նշոյն էլ (458), եւ է. «Հայոց պատասխանի պատճառով պատժուող եւ Պարկիստանի կանչուող անձանց մէջ առաջին պատասխանատուսն պէտք է լինէր այն անձը, որի անունով նամակը վերնադրուած է» (Եփեմի). Արդ մեր «առաջին պատասխանատու, խոսքը Հայունու գրչի սակ փոխուել է «Ժոյն Եփեմի» խօսքի, որով առաջացել է արդարեւ որ օխալ, որի դէմ զինուել դժուար չի եղել Հայունու համար:

Խեղաթիւրում են մեր ստանձները նաեւ երբ Հայունին փոքրում է մի վրին փաթեթի եպիսկոպոսների նահատակութեան ուրացութիւնը (1897, էջ 56), եւ հաւատարմութիւնը իւր միայն եւ ազգականը, ընթերցողին՝ թէ մենք իբր 1896 թ. «Հանդէս», համարներում «ուծացած ենք» (sic) 1895 թ. «Հանդէս», մէջ գետեղած մեր յօդուածի եւակն մտքից. — թէ Եղիշի պատմութիւնը ուշ ժամանակ է գրուած. (1897 — էջ 19): Այդպիսի ուրացութիւն եւ ուծացումները չենք արտայայտել մեր յօդուածների մէջ: Եւ իբր կարող ենք սակ նաեւ այն մասին՝ թէ իբր մենք Պարսից քաղաքական միտումները, որոնք առաջ բերին Վարդանանց պատերազմը, մի անհոգի մօղջ փշուռ են: հոգիւրէլ, որպիսի կարծիք մենք չենք կարող յայտնած լինել եւ ոչ մի տեղ:

Այս խեղաթիւրելու մի օրիշ պարզ օրինակ. — Եր. 452, 1897, դրած է ծանօթութեան մէջ. «Եւրոս (մեր յօդուածի) բուն առաջին մասն օրիշ խնդրով վերայ կը խօսի, որ ուղղակի կապ չունենայով յառաջանի մէջ յայտնած նպատակին հետ, մենք անոր պատասխանն յետաձգեցինք եւ Բ. մասն կը շարունակենք» Այս միակ խոստովանութիւնն է իւր յանցանքի, որ սպրդուած է Հայունու գրչի սակ, բայց որում Հայունին այդ ստղերը գրելով արդարեւ սրտաւած է ճշմարտաւորութեան զգացմանը: Այս մեր յառաջանի համապատասխանող մասը. «Զ. Ե. գրքը սակն է այնպիսի անձնագրահներ, որոնք օրինակելի են հասարակ յետագայ դարերում. այդ դիւրալները, մեր՝ իբրեւ արեւելեան ազգի՝ երեւակայութեան

մէջ ծաղիկներու են եւ գրուող յիշատակարանների մէջ եւս չափաւորեցրած գործերով են ներկայանում» — 3. Եղիշէի նկարագրած շղանք պատմել են օրիշ պատմիչը եւս, — Ղազար Փարսեցի, Եփեմի, Կաթողիկոս, Թովմա Վերդուինի, Վարդան պատմիչ, եւ այլն. նրանց մէջ Եղիշէի պատմածը շատ անգամ հակասակ վիճակով է հանդէս գալիս. շատ տեղում նրանք հակասում են Եղիշէին եւ մանաւանդ թէ աւելի տալիս ներկայանում պատմական իրողութիւնները, եւ այս մեծ մասամբ Ղազարի մէջ, («Հանդ. Ամս.», 1896, էջ 129.)

Այս յառաջանից յետոյ, մենք տեղադրել ենք իսկոյն մեր յօդուածի Ա. մասում Թ. Արեւունու, Եփեմի, Կաթողիկոսի հարցաբան տեղեւորութեանց քննութիւնը, տեղեկութիւններ, որոնք արդարեւ, ինչպէս յառաջանին մէջ գրուած էր, առաջացել են կամ տեղեկուել շնորհիւ հետեւեալ հանգամանքի. «Վարդանանց պատերազմը, իբրեւ ընդհանուր ազգային մի շարժում, անեղել է իւր մեծ ազդեցութիւնը ժողովրդի եւեւ-ալյա-նեւն վրա. նա ծղիկներ է այդ շղանք, ոտեղծել է նոր անձնագրութիւններ» եւ այլն («Հանդ. Ամս.», 1896, էջ 132): Պարզ է, կործանում ենք, որ մեր յօդուածի Ա. մասն մինչեւ անգամ անհրաժեշտ կերպով կցուած է յառաջանին, որի մէջ յիշած նպատակին բաց չի համապատասխանելու, մեր յօդուածի Ա. մասն անի, ինչպէս նորապիսի բառերը ցոյց են տալիս: բառացի կրկնութիւններ յառաջանին: Սակայն Հայունին չէ անհոգի այդ բոլորը:

Բայց ինչպէս ընթերցողին եւ շատանքը բերած օրինակներով, բայց որում գլխ. մեզին պատուած է պատասխանի մի հարց, որ վրեւ ունիւր յիշած. այն է թէ սրբան Հայունին հմուտ է անհանգիստ նիւթի մասին դատելու եւ վիճուել տալու մէջ:

Անձնականապէս մեզ անյայտ եւ իւր խորհրդածութիւններով միայն մեզ ծանօթ Հայունին, այն, ձեռնարկել է քննել իրան անձնաթիւ մի նիւթ, շտապաւորում մի գրութիւն, օրպիսին Եղիշէի պատմութիւնն է մեր յօդուածների մէջ: Այստեղ եւս կը շատանք մի քանի օրինակներով միայն. բայց պատշաճ է սկսել «առաջ արժան է սկսանել»:

Եղիշի Թովմ Բանուարի համարում խորհրդածութիւններով սկսում են այս տաղերով. «Մեր օրերը քննադատական ապարիզն բնորոշաց համար հետեւելի նշանակութիւն ունենում է (ստորագրում ենք) նախ իսկ առաջին քննիչ գործն այն անձին ձեռքը, ում կ'ընծայուէր, ապա դատաւական գալիս: Այդպէս ի հրապարակ եկաւ Տէրգոզորեան խիղճով Եղիշէի պատմութեան ազդեցութիւնն յօդուածում» (9): Պէտք է երեւակայել, որ Հայունին քննադատութիւն է գրում, եւ անկայն նա տարալի, արարողութեանց եւ սովորաբար նիւթական իրենի մասին գործադրուող «նրաձեռնութիւն», բառով է բնորոշում քննադատական մի ուղղութիւն, որի համաձայն գրուածքի ստանձնաբերութիւնը սկսում են հնչել այն հար-

ցով՝ որ ուղղակի ներկայացնում է վճիռ ինչպես գրուածքի վաւերականութեան, նոյնպէս եւ նրա ներքին ազմատնութեան մասին. այդ հարցը "աղբիւրների հետախուզութեան", հարցն է — Հայցանշի քննադատական ինտիւրներում competent է, գտնէ այդպէս է իրեն երեւակայում. բայց նա պարտաւոր էր նախ քան այդ՝ եթէ ոչ օտարապէս, գտնէ մեր համազգի քննադատներից աւտանել, որ "աղբիւրների հետախուզութիւնը է մի ճանապարհ", որով միայն կարելի է կշռել ու ստուգել հաստատուն կերպով մեր մասնաշաղկերների հաւատարմութեան շարքը, որպէս եւ նոցա ժամանակը. եւ բոտ այժմ ապահով նիւթ պարտաւորել լուրջ եւ ծանրաշուկ. հետազոտութիւնների համար. ("Հանդ. Ամս." 1895, էջ 114. Գր. խաւարեան "Եղիշէի աղբիւրների ուղբիւր") — Բայց Հայցանշաց աւելին չպահանջներ, բոտ որում նա միայն "ապակեաղ" է փոյլից առ ի փորձապետել աղբիւրների հետաքննութիւնը շինմանքների, եւ որին համար ուր աղջ կարելի չէ Magister dixit! արժեքնել, պէտք է model! model! արագանշել:

Մի աւելի տեղ նոյն Բաւնուարի համարում քննադատոր յանձն է առնում համարաշուկեան հանդէ գնել Եղիշէի ցանկերից մին զոր հանուր ցանկերի հետ. արգարեւ գփուարին զոր, որի համար սակայն Հայցանշին հեղափոխութիւն փաստարարում է որ մի հեղինակ երկրորդ անգամ մի խումբ մարդկանց անունները կարող է նոյն կարգով շարել, որով առաջին անգամ յիշել է, այլ տեղափոխութեան կարգով, միջոց այդպէս. "Սարգիս, Եփրեմ, Եսայի", եւ այլուր "Եփրեմ, Սարգիս եւ Եսայի", եւ հետեւաբար, իրատեան է մեզ Հայցանշին, այդ հանգամանքը թող չմոլորեցնի մեզ մի երկրորդ տղբիւր բնդունել միեւնոյն խմբի երկրորդ ցանկի համար, ինչպէս մենք իբր արել ենք Եղիշէի յառկան ցանկերից մինի համար:

Արգարեւ կ'ընդունուէր Հայցանշու առարկութիւնը՝ եթէ յիշուող անձինքը լինէին իրարից տարբեր եւ բոտ ամենայնի հեռու մարդիկ, ինչպէս Հայցանշու յիշանքներ՝ Սարգիս, Եփրեմ, Եսայի, որոնք ոչտանող միայն ընդհանուր անուններ են, փաստ ծառայող բոլորովին անգոր. իսկ Եղիշէի յիշան անձինքը կապուած են իրար հետ բարձրակի կարգով, որ անփոփոխ պէտք է մնար քանի անգամ եւ կրկնուէր այդ ցանկին: Օրինակ աւելի կը պարզէ մեր ասածը. պատմական կամ պաշտօնական գրութիւններում քանի անգամ եւս միասին յիշուելու լինին Հայոց պատարկաբեւերը, նոյնք կը յիշուեն ամէն անգամ միօրինակ աւագութեան կարգով, եւ ոչ մի անգամ կրտսերը չի նախադասուի աւագից: Բայց ի պէ, եթէ ինքն Հայցանշին որեւէ յօդուածի մէջ հարկ զգայ մի քանի տեղ արձանագրել թէկուզ վեհեանի Մխիթ. Հայրերի անունաւորուցանել, նա պարտաւոր է ամէն անգամ սկսել աւագութեան կարգի առաջին տեղը բռնող անձնանունութիւնից, շարունակել աւագութեան կարգով եւ վերջացնել այդ կարգի ամենակրտսեր անձնանունութեան անունով: Բայց ոչ երբեք սկսել մերթ կարգի միջից, մերթ վերջից եւ աւհասարակ բոտ քմայ: — Հակառակ գէպքում՝ եթէ կարգը

անփոփոխ չպահուի, պատճառը պէտք է որոնել ոչ թէ գրչի անփութութեան մէջ, այլ այդ կը նշանակէ որ կարգը կարճ միջոցում իրականութեն փոփոխութեան է ենթարկուած, եւ կամ՝ տարբեր աղբիւրներից են բաղաձեռ ցուցաններ, եթէ հեռու ժամանակին է վերաբերում յօդուածը. իսկ եթէ հետախուզութիւնը ցոյց տուելը, որ իրականապէս կարգը փոփոխութեան չի ենթարկուած. այն գէպքում պէտք է տարբեր աղբիւրներ ենթադրել, մանաւանդ միեւնոյն առթիւ, եւ միեւնոյն տնձանց մասին յիշած տարբեր ցուցանների համար. հակառակ գէպքում այդպիսի փոփոխութիւնը գրչի անփութութեան վերագրելու համար անհրաժեշտ է այդ յատկութիւնը հաստատուել եւ բնդունել աւելի ինտիւրների մէջ եւս. մի հանգամանք, որը Հայցանշին ի հարկի չի օգնեալ անել Եղիշէի նկատմամբ:

Մենք այդքան երկար ենք կանգնում մի շատ հակահայեց ինտիւր վրա, որովհետեւ նախ զործ ունինք Հայցանշու հետ, որ գրեւ թէթեւակի վերաբերուել գէպ ի առհասարակ իւր բնարած նիւթերը. եւ երկրորդ նպատակ կայ մեր առաջ ցոյց տալու թէ Եղիշէին պաշտպանելու համար Հայցանշու թող առարկութիւնները որքան քաղաքական եւ հեռաւոր ենթադրութիւններին տեղիք են տալիս:

Բայց այդ միակ գէպքը չէ, որ պատճառարար սարգուած լինի քննադատի գրչի տակ. նա, նիւթին անձնութիւն լինելու չնք հիւ, աւելի նշանուար մի հարցի մասին աւելի մեծ սխալներ է նիւթել իւր գրչի համար. օրինակ, քննադատը կարծած է թէ ինչո՞ւ հիմունքով, որով չենք յետի դարձրել մի անյայտ անձնանունութեան ենք վերագրել Եղիշէի յատկական ցանկերի կազմութիւնը, կարելի է ընդգուշել, որ իբր ընդհանուր ցանկերը Եղիշէն գրելուց յետոյ, կազմել է նաեւ այլ բարձրակի կարգերով երկու յատկական ցանկերը, որոնք նոյնաութիւն չունին նաեւ իրար մէջ. իսկ Ղազար ապա Եղիշէից ընդօրինակած լինի չորս ընդհանուր ցանկերը միայն, եւ իրենցից յօրինած լինի երեք այլ բարձրակի կարգի ցանկեր, որոնք իբր առաջնութիւն չունին ոչ ընդհանուր ցանկերի ոչ իրար մէջ. Ղազար, հասկացուած է, անուշադրութեան է մասնել այդ գէպքում Եղիշէի երկու յատկական ցանկերը:

Ըստ երեւութի հասկանալի է այդ բոլորը եւ կարիք չկայ մի նոր բացատրութեան. բայց տես՝ ինչորին ծանօթ մի գրչի համար քանի անպատասխան հարցերի առիթ է տալիս այդ պարզ մեկնութիւնը. նախ՝ ինչո՞ւ Եղիշէն պէտք է տարբերել չորս ցանկի կարգերը իւր միւս ցանկերից. երկրորդ՝ ինչո՞ւ յատկական երկու ցանկերը՝ նման ընդհանուր ցանկերի, իրար մէջ համեմատելութիւն չունին ստացած Եղիշէից. երրորդ՝ ինչո՞ւ միայն չորս առաջին ցանկը ընդօրինակել Ղազար Եղիշէից իբր աղբիւրից. չորրորդ՝ ինչո՞ւ Ղազար իւր աղբիւրից, Եղիշէից, բայց թողեց նրա յատկական երկու ցանկը. հինգերորդ՝ ինչո՞ւ Ղազար Եղիշէից ընդօրինակած ցանկերի կարգով չօրինելու իւր երեք յատկական ցանկերը. վեցերորդ՝ ինչո՞ւ Ղազարի յատկական ցանկերը գտնէ իրար մէջ առեւտրութիւն չունին:

Այս բոլոր հարցերը առաջնորդում են ի հարկէ համաձայն Հայոցնու կարծիքների, որ նա ունի բնորոշ հասկացումը և յատկական ցանկերի մասին, և զիստամբ վեր մտածեցինք նորա զանազան էջերում գրուած մարդիկները մի մի հարցական նշանների ձեւով շարել՝ յստիգիման նրա սխալ ենթադրութեան, որպէս զի պարզ տեսնի ընթերցողը թէ քննադատար, շնորհիւ եղիշէին բաւականաչափ անձնութիւններ, որպիսի տարակարծիք լիցող ունի բանեցրած իրար յաջորդող էջերում: Արիշ բաւականով ասած, ուր խորհրդածութիւնների մէջ Հայոցնին իւր ասածի տերը չի հանդիսանում, յաջորդ էջում նա պատրաստ է հակառակին ասել քան նախորդ էջում ասածը. և ապա արեւ եթէ ծիշէ, որ «ո՞նք ինքը մարդն է», հարց ուրեմն ծիշէ, որ Հայոցնին իւր ասածի տերը չէ: Ահա մի օրինակ և ալ. տեսնակից. 1897, էջ 10 մենք խրատած ենք Հայոցնու կողմը, որ «ինչ-ի՞նչ մի կամ շատ կերպով անմիաբանութեան վերայ չէ, այլ որեւէ տարածայնութիւն», այս առթով Հայոցնին պատահական չի համարում (ինչպէս այդ մենք համարել էինք ամենայն իրաւամբ) միայն մի ցուցակի մէջ նկատում են այն՝ միայն մի դէպքով բարձրական կարգի խաղաղարում: Սակայն այդպէս խիտ խոտով Հայոցնին էջ 13 ասում է թէ պատահական կերպով է միայն («գիպուածով իմէ»), որ եղիշէ միօրեւակութիւն ունի երեւ հանդիմանող մէջ (ստորագծում ենք) և նոյնպէս պատահական կերպով է («գիպուածով իմէ») որ նա միօրեւակութիւն չունի ինչ է, 8 և 9 աւերող երեւ ցանկի մէջ (տես «Հատուց. Ա» 1895, փետրեմբ. մեր յօդուածը «Եղիշէին պատմութեան աղբիւրը»):

Սակայն մենք ինչպէսնք ընթերցողին, ըստ որում հետաքրքրութիւն ունեցող անձինք անձամբ ևւա կարող են տեսնել օրինակների աւերող խումբ այնտեղ, ուր մենք աշխատել ենք սեղծուած խոսել և նմաններով միայն բուականանալ:

Բայց ցանկանալով գաղափարեցնել մեր առջը, զգում ենք մի պարտաւորութիւն — խառնութեանու Հայոցնու երկար յօդուածների միակ արժանաւորութիւնը: Մեզ յայտնի չէ թէ երբեքիցէ Հայոցնին ուշադրութիւն գարեթած լինի Եղիշէին և Ղազարի ցուցակների վրայ. իսկ այժմ, առիթ ունենալով այդ մասին մեր առաջարկած փոքրիկ հետազոտութիւնը, Հայոցնին իւր խորհրդածութիւնների համար մտել է վեճեակի Մակիթ. Հայրենի ձեռագրատանը եւ այնտեղից լոյս աշխարհ է հանել ցուցակների մասին քանի մի ձեռագրական նկատողութիւններ. ծիշէ, որ, վերջիններս Հայոցնու գրելի իրենց իսկական ծառայութիւնը չեն կարողացել մատուցանել. բայց իրենց նշանակութիւնը անշուշտ նրանք կ'ունենան ցուցակների մասին թէ որեւէ նոր հետազոտութեան եւ թէ մեր իսկ նկատողութիւնների մէջ քանի մի անբաղատարէք մնացած երկրորդական հարցերի համար: Նոյնք կարող ենք ասել Ուսուցչատան Կանքիթի գտած հատուկ տարիների համար նրա կատարած պայտի մասին վեճեակի ձեռագրատան մէջ. և համարում ենք, եթէ Հայոցնին ձեռնարկէր գէթ այդ երկու խնդրի նկատմամբ ձեռագրական փոփոխութիւններն ար-

ձանագրել «Բաղմալեզի», մէջ, ևւ այն ոչ թեւ թեւակի կերպով, ոտի բնագիմարանելու միտումը առաջնորդ ունենալով, այլ Հէնց այդ փոփոխութիւնները աւերող ցուցակների մէջ արձանագրելու նպատակով, — նա աւելի մեծ ծառայութիւն մատուցած կը լինէր թէ բանասերներին ևւ թէ «Բաղմալեզի» էջերին:

Թիֆլիզ 1/13 Յունիսի 1897 թ:

ԳՐ. ՏԵՐ-ՊՕՂՈՍԵԱՍ



ԿՈՂՈՍԵԱՍ ԹՂԵՐԱՅԻՆԻ

Գ.

Պարտաւոր ընտրութիւններն են Գիտողութիւնը ընդդէմ Հայոց:

Ս. Երէջում: Այն հակահայտն շարժումն, որ վերջին 3 — 4 տարին այստեղ ամենուրեք ուշադրութիւն է գրուած, ևւ որ մեր նախորդ թիւում ցուցութեան երեւ կը կազմէր, այժմ արդէն հանդարտած կրնայ համարուիլ: — Եւ ուրիշներ է նկատել, որ Վսիկայի եւ այլերն անվերջով արժանաւորութեամբ տարին իրենց զէմ ուղղուած այն խիտ գրական յարձակումներն. ևւ առիթ չունեցան զղչելու իրենց բռնած այն գրից վայր որովհետեւ զ. Վելիշկոյի յարեցած ազմունքն ոչ մի վտանգաւոր հետեւեց յառաջ չբերու: Բնորոշական կ'ենթադրուի թէ կառավարութեան ղեկավարող շրջանները անգամ մի եւս համազուեցան, թէ Վսիկանան Հայոց վայր բարդուած մեղադրանքն ոչ մի օրինաւոր հիմք չունէր: — Հայոց հաստատութիւն հպատակութեան զգալի մասերը կապեցին երկրակեղ կարող էին այն աստիճանի վրայ՝ որոնք կանխաւ կալ թշնամական ոգւով առջնորդուած ևւ Հայոց զէմ: — Հայ ժողովուրդն անշուշտ պակասութիւններ ունի ունի գոյց ևւ մեծ պակասութիւններ, որոնք արդեւք են երթալ դարեւն ի վեր իր ունեցած քաղաքական գրից ևւ վայրենի ցեղերու դրամութեան: Եթէ այս պակասութիւններն անկողմնապէս կերպով երեւան հանուէին ևւ ժողովուրդը աւելու հանաւ բերելու նպատակով հարուստուէին, անշուշտ կ'ունենային իրենց բարեբաւ աղքատութիւնն ևւ ամէն ինքնատէր Հայ պետք էր շնորհակալ լինել միայն այնպիսի անկեղծ քննադատութեան, որպիսի եւ այն դառն լինէր իրեն համար: Անվերջ ևւ նոյն իսկ ամենախիտ կերպով քննել իր թերութիւններն, պարզել իր սուղը իր սեպհական բարոյական վերքերն ևւ աշխատել ըստ այնմ ազգէն ու բժշկուիլ — ասան առաջարկութեան անհրաժեշտ պայմաններէն մէկը: Այն օրն, որ ազգ մի, մանուանող մէջ նման փոքրեթիւ, իրականութիւն եւ ակոր ժողովուրդ մի, խորշակու սեպհական ինքնաբերականութեան ևւ թշնամութեամբ լուց իր թերութիւններու ազգութեան նկատմամբ անկեղծօրէն տրուած խրատներն, այն